28. ***Շիրազը*** քաղաք է Իրանի հարավ-արևմուտքում, Ֆարսիստանի վարչական կենտրոնն է: Հռչակավոր է իր վարդերով:

29. ***Քերման*** կամ Քիրման Իրանի հարավ-արևելյան քաղաքներից է:

30. ***Ջալալի*** բառը ապստամբ է նշանակում: Առաջացել է Թոխաթ (Եվդոկիա) քաղաքի ապստամբության առաջնորդ Ջելալի անունից: Դրանից հետո Օսմանյան կայսրության դեմ ապստամբները կոչվում էին ջելալի:

31. ***Չըլդրի դաշտը*** Չըլդր լճի մոտ է, իսկ լիճը Հայկական լեռնաշխարհի հյուսիս-արևելքում է, Արդահանի շրջանում:

32. ***Ենիչերին*** հատուկ զորամասի զինվոր էր: Այս զորամասերը պատրաստում էին թուրքերը քրիստոնյա գերիներից, իսկ ավելի ուշ հավաքում էին քրիստոնյա երեխաներ և նրանցից պատրաստում էին քրիստոնեական զորք: Այս զորքը աչքի էր ընկնում ծայրահեղ անգթությամբ: Ենիչերիությունը սկսվեց 14-րդ դարում և հետագայում պատիժ դարձավ Օսմանյան կայսրության համար: 1826 թվին Մահմադ սուլթան 2-րդը վերացրեց:

33. ***Խնուսը*** Բարձր Հայքի քաղաքներից է Կարինի վիլայեթում: 1915 թվին ուներ 2163 հայ բնակիչ:

34. ***Բասենը*** գավառ է Մեծ Հայքի Այրարատ նահանգում: Գտնվում է Արաքսի վերին հոսանքի վայրում: Հյուսիս-արևմտյան սահմանները հասնում են մինչև Վանանդ, մի ժամանակ Կարսը ևս պատկանել է Բասենին:

35. ***Կարինը*** (Էրզրումը) Մեծ Հայքի Բարձր Հայք նահանգի կենտրոնական քաղաքն է Արաքս և Եփրատ գետերի ակունքների մոտ:

36. ***Դերջանը*** Մեծ Հայքի Բարձր Հայք նահանգի շրջաններից մեկն է, որի կենտրոնը Մամախաթունն է:

37. ***Կեղին*** կամ Քղին Բարձր Հայքի գավառներից է և գավառի կենտրոնն է: Քղիի 3500 բնակիչներից 2500-ը հայեր էին:

38. ***Բաբերդը*** Մեծ Հայքի Բարձր Հայք նահանգի Սպեր գավառում Ճորոխի ձախ ափին է: Ուներ 10 հազար հայ բնակչություն:

39. ***Սպերը*** բերդաքաղաք է Մեծ Հայքի Բարձր Հայք նահանգում: Սպեր նույնանուն գավառի կենտրոնն է:

40. ***Իկոնիոնը*** (Կոնիա, Իկոնիա) Փոքր Ասիայի քաղաքներից է:

41. ***Ծարեցի Հովհան*** վարդապետը 16-րդ դարում գրել է Կաղանկատվացու երկի համար իբրև լրացում Աղվանքի համառոտ պատմությունը:

42. ***Դամուրղափը*** Դերբենդի լեռնանցքն է:

43. ***Խուդաֆրինը*** կամուրջ էր Արաքսի վրա Հայաստանի ու Պարսկաստանի միջև Աղավնագետի խառնուրդի մոտ:

44. ***Օզբեկները*** ուզբեկներն են: Պահլավունի են կոչվում, որովհետև Բահլից են եկել գրավել Աֆղանստանի Հերաթը:

45. ***Խզիրան*** կամ Ղազվինը Իրանի քաղաքներից է, գտնվում է իրանի հյուսիս-արևելքում:

46. Տես՝ ծանոթ. 28:

47. ***Արծկեն*** Մեծ Հայքի Տուրուբերան նահանգի Բզնունի գավառի քաղաքներից է Վանա լճի հյուսիսային ափին:

48. ***Արծնի*** կամ ***Արզնի*** գյուղ է Կոտայքի շրջանում: Աբովյան քաղաքից 7 կմ հեռավորությամբ:

49. ***Գիշանը, Ղանդահարը, Հուրմուզը, Հրեն*** կամ ***Հերաթը*** Աֆղանստանի քաղաքներ են:

50. ***Եղեգնաձորը*** հնում ընդգրկում էր Եղեգնաձորի և Վայքի շրջանները և մտնում էր Սյունյաց նահանգի մեջ:

51. ***Գեղամը*** Գեղարքունիքն է, որ տարածվում է Սևանի հարավային ափերին:

52. ***Լոռին*** Մեծ Հայքի Գուգարք նահանգի շրջաններից է: Անունը ստացել է Ստեփանավան քաղաքի մոտ գտնվող Լոռե քաղաքից, որ այժմ ավերակ է: Կառուցվել է 11-րդ դարում:

53. ***Համզաչիման -*** գյուղ Գուգարքի շրջանում, այժմ՝ Մարգահովիտ:

54. ***Նիգը*** Ապարանն է, որ արևմուտքում սահմանակից է Շիրակին, հարավ-արևելքում՝ Աշտարակին:

55. ***Շարաբխանան*** Ալիշանը տեղադրում է Նիգ գավառի արևմուտքում Շիրակին սահմանակից, որ կոչվել է Շիրաղալա:

56. ***Զարիշատը*** Մեծ Հայքի Տուրուբերան նահանգի Աղիովիտ գավառի քաղաքներից է: Պարսիկները կործանեցին, բայց նորից վերակառուցվեց:

57. ***Կաղզվանը*** Կարսից հարավ՝ Արաքսի աջ ափին է, շրջապատված է ծառաստաններով:

58. ***Ալաշկերտը*** Մեծ Հայքի Արարատյան նահանգի Բագրևանդ գավառում է: Վաղարշակերտ բերդաքաղաքի թրքական աղավաղյալ ձևն է:

59. ***Մակուն*** Պարսկահայքի քաղաքներից է՝ Մասիսից հարավ-արևելք:

60. ***Աղբակը*** Մեծ Հայքի Վասպուրական նահանգի գավառներից է:

61. ***Մալմաստը*** Պարսկահայքի գավառներից է, որի Փայաջուկ գյուղում ծնվել է Բաֆֆին:

62. ***Խոյը*** Պարսկահայքի քաղաքներից է:

63. ***Ուրմիան*** եղել է Մեծ Հայքի Պարսկահայք նահանգի Թրաքի գավառի կենտրոնը: Հայաստանի՝ 387 թվականի բաժանումից հետո անցել է Պարսկաստանին: Ուրմիա լճից արևմուտք քաղաք է մոտ 2 հարյուր հազար բնակչով:

64. ***Ծաղկնուձորը*** կամ Ծաղկոցաձորը ըստ Ալիշանի՝ հյուսիսից սահմանագծվում է Տաշիրքի լեռներով, արևմուտքից ու հարավից Նիգ (Ապարան) գավառով, հարավից ու արևելքից՝ Կոտայքով ու Սևանով: Կենտրոնը Ծաղկաձորն է եղել, որ հռչակավոր ամառանոց է: